*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԽՈՍՐՈՎԻ ԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ» ՊՈԱԿ*

*ՀՐԱՎԵՐ*

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6» ծածկագրով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին
ըստ ցանկի

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարության «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքը: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԽԱՊԱՇՀԱՊՁԲ-11/6-14/2-Ա»:

Հայտնում եմ, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Վեդի, Կասյան 79, «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ հասցեով, մինչև 2014 թվականի օգոստոսի 20-ը, ժամը 12:00-ը:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ Օ. Ասատրյան:

Հայտերը կբացվեն Արարատի մարզ ք. Վեդի, Կասյան 79, «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ հասցում, 2014 թվականի օգոստոսի 20-ին, ժամը 12:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ բնապահպանության նախարարության «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ ավտոպահեստամասերի ձեռքբերումը:

ՀՀ բնապահպանության նախարարության «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ ավտոպահեստամասերի (որոնք կազմված են՝ 6 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է հրավերի (ծանուցման) N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են՝ իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը (Հավելված N 2), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկը (Հավելված N 3): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում եմ կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ բնապահպանության նախարարության «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ xosroviantar@rambler.ru:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր՝ 11 թերթ:

Հարգանքով՝ Հ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Հավելված № 1

# ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ
# ԱՎՏՈՊԱՀԵՍՏԱՄԱՍԵՐ
**№** ԽԱՊԱՇՀԱՊՁԲ-11/6-14/2-Ա **ծածկագրով գնման ընթացակարգի**

| Չ/Հ | ²Ü ì ²Üàôø | â/Ø | ¶ÝÙ³Ý ³é³ñÏ³ÍÇ տեխնիկական բնութագիր |
|---|---|---|---|
| 4 | ավտոմեքենաների անիվներ ամառային 225/75R 16 | հատ | Անվադող ամառային, մարդատար ավտոմեքենաների համար: Վախենում է կրակից: Անվադողի նշանադրում, մակնշումը և տեխնիկական առանձնահատկությունները պետք է համապատասխանեն ՀՍՏ 183-99 պահանջներին: Փոխադրումը ցանկացած տրանսպորտով: Լրակազմի մեջ մտնում է դողը, անվախուցը և թասակը: Գույնը սև: |
| 5 | ավտոմեքենաների անիվներ ձմեռային 225/75R 16 | հատ | Անվադող ձմեռային, մարդատար ավտոմեքենաների համար: Վախենում է կրակից: Անվադողի նշանադրում, մակնշումը և տեխնիկական առանձնահատկությունները պետք է համապատասխանեն ՀՍՏ 183-99 պահանջներին: Փոխադրումը ցանկացած տրանսպորտով: Լրակազմի մեջ մտնում է դողը, անվախուցը և թասակը: Գույնը սև: |

Պարտադիր պայման է համդիսանում անվադողերի չօգտագործված լիմելը:

**Հավելված N 2**

**N «ԽԱՊԱՇՀԱՊՁԲ-11/6-14/2-Ա»** ծածկագրով

**ընթացակարգի գնահատող հանձնաժողովին**

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

----------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
Հայաստանի Հանրապետության **Բնապահպանության** նախարարության **<<Խոսրովի անտառ>> պետական արգելոց>> ՊՈԱԿ**-ի կողմից N **«ԽԱՊԱՇՀԱՊՁԲ-11/6-14/2-Ա»** ծածկագրով հայտարարված ընթացակարգի և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:
----------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝
1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:
----------ն հայտնում և հավաստում է, որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

----------ի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

էլեկտրոնային փոստի հասցեն է՝----------:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

---------- ----------
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

_____----------_2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

**Հավելված N 3**

N **«ԽԱՊԱՇՀԱՊՁԲ-11/6-14/2-Ա»** ծածկագրով

**ընթացակարգի գնահատող հանձնաժողովին**

**Գ ն ի  ա ռ ա ջ ա ր կ**

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված ***N «ԽԱՊԱՇՀԱՊՁԲ-11/6-14/2-Ա»*** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը, ինչպես նաև Ձեր կողմից տրամադրված ծանուցումը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____- ն

Գնման ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | | | | |

**3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*
** Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*
*** Խնդրում ենք Հավելված 1-ում նշված ապրանքների չափաբաժինների համարները գրել համապատասխանաբար*

_---------- ----------

_____ _____

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) ( տորագրությունը)

Կ. Տ.

_____----------2014թ.

(ամսաթիվը, ամիսը)

# ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ԽԱՊԱՇՀԱՊՁԲ-11/6-14/2-Ա

ք. Վեղի << ---- >> <<------- >> 2014թ.

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Է.Փիրումյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Ծրագիր իրականացնող») և <<Խոսրովի անտառ>> պետական արգելոց>> ՊՈԱԿ-ը, ի դեմս կազմակերպության տնօրեն Հ. Հովակիմյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Ստացող»), մի կողմից, և «_____» _____-ն, ի դեմս տնօրեն _____ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Մատակարար»), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1 «Մատակարար»-ը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում «Ծրագիր իրականացնող»-ի կողմից որոշված «Ստացող»-ին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **ապրանքը** (այսուհետև՝ Ապրանք): «Ծրագիր իրականացնող»-ն պարտավորվում է վճարել դրա համար, իսկ «Ստացող»-ը՝ ընդունել այդ Ապրանքը:

## 2. Մատակարարման պայմանները

2.1. «Մատակարար»-ն Ապրանքը հասցնում է «Ստացող»-ին:

2.2. Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ «Մատակարար»-ը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

**3.1. «Ծրագիր իրականացնող»-ն իրավունք ունի՝**

3.1.1. Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում «Մատակարար»-ի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2. «Մատակարար»-ից պահանջել հատուցելու վնասները, եթե «Ծրագիր իրականացնող»-ն «Մատակարար»-ի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.3. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե «Մատակարար»-ն էականորեն խախտել է սույն պայամանագիրը.

3.1.3.1. «Մատակարար»-ի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել «Ստացող»-ի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

**3.2. «Ծրագիր իրականացնող»-ն պարտավոր է՝**

3.2.1. Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

***3.2.2. Միջնորդել համապատասխան մարմիններին Ստացողի կողմից կնքված սույն գործարքի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկային և մաքսային արտոնությունները կիրառելու համար՝ ներառյալ ԱԱՀ-ի արտոնությունների, այդ թվում ՀՀ տարածք ապրանքների ներմուծման նկատմամբ, հիմք ընդունելով 2014 թվականի ապրիլի 22-ին Ծրագիրն իրականացնողի, Ստացողի և Կովկասի Բնության Հիմնադրամի միջև եռակողմ կնքված դրամաշնորհի համաձայնագիրը:***

**3.3. «Ստացող»-ն իրավունք ունի՝**

3.3.1. Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել «Մատակարար»-ից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.3.2. Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել «Մատակարար»-ին.

**3.4. «Ստացող»-ը պարտավոր է՝**

3.4.1. Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.4.2. «Մատակարար»-ի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել «Մատակարար»-ին.

3.4.3. Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին «Մատակարար»-ին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.5. «Մատակարար»-ն իրավունք ունի՝**

3.5.1. «Ստացող»-ից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.5.2. «Ծրագիր իրականացնող»-ից պահանջել հատուցելու վնասները, եթե «Մատակարար»-ը «Ծրագիր իրականացնող»-ի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.5.3. «Ծրագիր իրականացնող»-ից կամ «Ստացող»-ից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.5.4. «Ստացող»-ի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և «Ստացող»-ի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.5.5. Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.6. «Մատակարար»-ը պարտավոր է՝**

3.6.1. «Ստացող»-ին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.6.2. «Ստացող»-ին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.6.3. «Ստացող»-ի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.6.4. Հետ տանել «Ստացող»-ի կողմից սույն պայմանագրի 3.4.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ «Մատակարար»-ին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.6.5. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.6.6. «Ստացող»-ին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.6.7. Սույն Պայմանագրի 3.1.3 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո «Ծրագիր իրականացնող»-ին հատուցել վերջինիս վնասները:

3.6.8. Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել «Ծրագիր իրականացնող»-ին:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

***4.1.*** Սույն պայմանագրով «Մատակարար»-ի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը առանց ԱԱՀ-ի կազմում է՝ **_____ (_____) ՀՀ դրամ**՝ ընդ որում **մեկ միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի N 2** հավելվածով: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և շահույթը, ***բացառությամբ ԱԱՀ-ի:***

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Մատակարարն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Ստացողը նվազեցնելու այդ գինը:

***Սույն պայմանագրով նախատեսված գործարքը անմիջականորեն կապված է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-796-Ա որոշմամբ բարեգործական որակված ծրագրի իրականացման հետ:***

4.2. «Ստացող»-ը մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները «Մատակարար»-ի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, բայց ոչ ուշ քան **2014** թվականի **դեկտեմբերի 25**-ը:

## 5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1. «Մատակարար»-ը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2. Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են «Ստացող»-ի և «Մատակարար»-ի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: «Մատակարար»-ը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում «Ստացող»-ին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2. Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Ծրագիր իրականացնողն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) «Մատակարար»-ի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3. «Ստացող»-ը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում «Մատակարար»-ին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1. «Մատակարար»-ը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2. «Մատակարար»-ի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3. Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում «Մատակարար»-ից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4. Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են «Մատակարար»-ին վճարման ենթակա գումարներից:

7.5. «Ստացող»-ի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար «Ծրագիր իրականացնող»-ի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7. Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1. ***Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև*** **2014 թվականի սեպտեմբերի 30-ը:**

9.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, «Մատակարար»-ը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ «Մատակարար»-ին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո «Ծրագիր իրականացնող»-ն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, «Ծրագիր իրականացնող»-ն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով «Մատակարար»-ի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով «Ծրագիր իրականացնող»-ի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ «Ծրագիր իրականացնող»-ի ստացածով:

9.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.4. Պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

2) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

Սույն պայմանագրում չեն կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ «Ծրագիր իրականացնող»-ի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5. Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի («Մատակարար» և (կամ) «Ծրագիր իրականացնող») օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում «Մատակարար»-ի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Ծրագիր իրականացնողի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7. Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած 4 թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**<u>Ծրագիրն իրականացնող՝</u>**

ՀՀ բնապահպանության նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507198
Աշխատակազմի ղեկավար՝
---------- Է. Փիրումյան
ստորագրություն Կ.Տ

**Ստացող**

<<Խոսրովի անտառ>>
պետական արգելոց>> ՊՈԱԿ
ք. Վեղի, Կասյան 79
<<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ
Վեղի մասնաճյուղ
Հ/Հ 247760121803
ՀՎՀՀ 04108656
Տնօրեն՝

---------- Հ. Հովակիմյան
ստորագրություն
Կ.Տ

**Մատակարար**

Տնօրեն՝

---
ստորագրություն
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված 1.
------. -------. 2014թ կնքված
N ԽԱՊԱՇՀԱՊՁԲ-11/6-14/2-Ա
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Չ/Հ | ²Ü ì ²Üàôø | â/Ø | ¶ÝÙ³Ý ³é³ñÏ³ÍÇ տեխնիկական բնութագիր |
|---|---|---|---|
| 1 | ավտոմեքենաների անիվներ ամառային 225/75R 16 | հատ | Անվադող ամառային, մարդատար ավտոմեքենաների համար: Վախենում է կրակից: Անվադողի նշանադրում, մակնշումը և տեխնիկական առանձնահատկությունները պետք է համապատասխանեն ՀՍՏ 183-99 պահանջներին: Փոխադրումը ցանկացած տրանսպորտով: Էրակազմի մեջ մտնում է դողը, անվախուցը և թասակը: Գույնը սև: |
| 2 | ավտոմեքենաների անիվներ ձմեռային 225/75R 16 | հատ | Անվադող ձմեռային, մարդատար ավտոմեքենաների համար: Վախենում է կրակից: Անվադողի նշանադրում, մակնշումը և տեխնիկական առանձնահատկությունները պետք է համապատասխանեն ՀՍՏ 183-99 պահանջներին: Փոխադրումը ցանկացած տրանսպորտով: Էրակազմի մեջ մտնում է դողը, անվախուցը և թասակը: Գույնը սև: |
| **Գնման պահանջվող ժամկետները** | | **Գնման ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Մատակարարը համաձայնում է պայմանգիրը կատարել ավելի կարճ ժամկետում:** | |

**<u>Ծրագիրն իրականացնող՝</u>**

ՀՀ բնապահպանության նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507198
Աշխատակազմի ղեկավար՝

---------- Է. Փիրումյան
ստորագրություն Կ.Տ

**Ստացող**
<<Խոսրովի անտառ>>
պետական արգելոց>> ՊՈԱԿ
ք. Վեղի, Կապան 79
<<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ
Վեղի մասնաճյուղ
Հ/Հ 247760121803
ՀՎՀՀ 04108656
Տնօրեն՝

---------- Հ. Հովակիմյան
ստորագրություն
Կ.Տ

**Մատակարար**

Տնօրեն՝

---
ստորագրություն
Կ.Տ

*Հավելված 2*
*<<----->> ------. 2014 թ. կնքված*
**N ԽԱՊԱՇՀԱՊՁԲ-11/6-14/2-Ա** *ծածկագրով գնման պայմանագրի*

## *ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2014թ. | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | III եռամսյակ | | IVեռամսյակ | | Տարեկան | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | ավտոմեքենաների անիվներ ամառային 225/75R 16 | հատ | | 12 | | 0 | | 12 | |
| 2 | ավտոմեքենաների անիվներ ձմեռային 225/75R 16 | հատ | | 12 | | 0 | | 12 | |
| Ընդամենը | | | | | | | | | |

**հազ.դրամ**

**Ծրագիրն իրականացնող՝**

ՀՀ բնապահպանության նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507198
Աշխատակազմի ղեկավար՝

---------- Է. Փիրումյան
ստորագրություն Կ.Տ

**Ստացող**

<<Խոսրովի անտառ>>
պետական արգելոց>> ՊՈԱԿ
ք. Վեդի, Կասյան 79
<<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ
Վեդի մասնաճյուղ
Հ/Հ 247760121803
ՀՎՀՀ 04108656
Տնօրեն՝
---------- Հ. Հովակիմյան
ստորագրություն
Կ.Տ

**Մատակարար**

Տնօրեն՝

---
ստորագրություն
Կ.Տ

*Հավելված 3*
*<<------>> --------. 2014 թ. կնքված*
**N ԽԱՊԱՇՀԱՊՁԲ-11/6-14/2-Ա** *ծածկագրով*
*գնման պայմանագրի*

***Վճարման ժամանակացույց****

| N | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել արտաբյուջեի միջոցների հաշվին՝2014թ.-ի ընթացքում ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1 | ավտոմեքենաների անիվներ ամառային 225/75R 16 | | | | | | | | *100%* | *100%* | *100%* | *100%* | *100%* | *100%* |
| 2 | ավտոմեքենաների անիվներ ձմեռային 225/75R 16 | | | | | | | | *100%* | *100%* | *100%* | *100%* | *100%* | *100%* |
| | ***ԸՆԴԱՄԵՆԸ՝*** | | | | | | | | *100%* | *100%* | *100%* | *100%* | *100%* | *100%* |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով։*

**Ծրագիրն իրականացնող՝**

ՀՀ բնապահպանության նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507198
Աշխատակազմի ղեկավար՝

---------- Է. Փիրումյան
ստորագրություն Կ.Տ

**Ստացող**

<<Խոսրովի անտառ>>
պետական արգելոց>> ՊՈԱԿ
ք. Վեղի, Կասյան 79
<<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ
Վեղի մասնաճյուղ
Հ/Հ 247760121803
ՀՎՀՀ 04108656
Տնօրեն՝
---------- Հ. Հովակիմյան
ստորագրություն
Կ.Տ

**Մատակարար**

Տնօրեն՝

---
ստորագրություն
Կ.Տ

*Հավելված 4*
*<<------>> --------. 2014թ.*
*կնքված N ԽԱՊԱՇՀԱՊՁԲ-11/6-14/2-Ա*
*ծածկագրով գնման պայմանագրի*

| Ստացող | Մատակարար |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| _____ | _____ |
| հասցե_____ | հասցե_____ |
| հհ_____ | հհ_____ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<<_____>> <<_____>> 2014 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<_____>> <<_____>> 2014 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Ստացողը՝ ի դեմս _____ և Մատակարարը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ապրանքները (այսուհետև՝ ապրանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Մատակարարը __ _____ 2014 թ-ից _____ 2014թ. ընկած ժամանակահատվածում մատակարարել է հետևյալ ապրանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Ապրանքների մատակարարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ ապրանքների մատակարարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքները մատակարարեց | Ապրանքներն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| Ազգանուն, Անուն | Ազգանուն, Անուն |